## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 1

## 10.09.2025Թ. ԿՆՔՎԱԾ N «ՉՀ-ԳՀԱՇՁԲ-2025/15» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Չարենցավան «06» 02 2026թ.

Չարենցավանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Հ. Կ. Շահգալդյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԿԱՍԿԱԴ ԿՈՄՊԼԵՔՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Յ. Բալայանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 10.09.2025թ. կնքված N «ՉՀ-ԳՀԱՇՁԲ-2025/15» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5-րդ և 8.6-րդ կետերը, «ԿԱՍԿԱԴ ԿՈՄՊԼԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած 29.01.2026թ. թիվ 392/04 գրությունը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով՝ Կողմերը որոշեցին՝

1.1 10.09.2025թ. կնքված N «ՉՀ-ԳՀԱՇՁԲ-2025/15» գնման պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով՝ աշխատանքների կատարման վերջնաժամկետը սահմանելով մինչև 2026 թվականի մարտի 19-ը ներառյալ:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»**
**Չարենցավանի համայնքապետարան**
**ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1**
**ՀՀ ՖՆ ԳՎ**
**Հ/Հ 900132161010**
**ՀՎՀՀ 03022497**

**Համայնքի ղեկավար՝**
**Հ. Կ. Շահգալդյան**

______________________
(ստորագրությունը)
Կ.Տ

**«ԿԱՊԱԼԱՌՈՒ»**
**«ԿԱՍԿԱԴ ԿՈՄՊԼԵՔՍ» ՍՊԸ**
**ք. Երևան, Վերին Անտառային փողոց 186/11/11**
**«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ**
**Հ/Հ 1570097661950200**
**ՀՎՀՀ 02900705**
**Էլ. փոստ՝ progress.ooo.2001@mail.ru**
**Հեռ. (+37495) 20-11-11**

**Տնօրեն՝ Յ. Բալայան**

______________________
(ստորագրությունը)
Կ.Տ